

II

*(Ոչ օրենսդրական ակտեր)***ԿԱՆՈՆԱԿԱՐԳԵՐ**

**«Կենցաղային թմբուկային չորացնող մեքենաների
էներգապիտակավորման մասին» Եվրոպական պառլամենտի և
Խորհրդի 2010/30/ԵՄ հրահանգը լրացնող՝**

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 1-Ի ԹԻՎ 392/2012

ՊԱՏՎԻՐԱԿՎԱԾ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ (ԵՄ)

(Եվրոպական տնտեսական տարածքին առնչվող տեքստ)

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ,

հաշվի առնելով «Եվրոպական միության գործունեության մասին» պայմանագիրը,
հաշվի առնելով «էներգասպառող արտադրանքի կողմից սպառվող էներգիայի և
այլ ռեսուրսների վերաբերյալ՝ պիտակավորման և արտադրանքի մասին
ստանդարտ տեղեկությունների ներկայացման միջոցով նշում կատարելու մասին»
Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2010 թվականի մայիսի 19-ի 2010/30/ԵՄ
հրահանգը¹ և մասնավորապես՝ դրա 10-րդ հոդվածը,

¹ ՊՏ L 153, 18.06.2010թ., էջ 1:

քանի որ՝

- 1) 2010/30/ԵՄ հրահանգով պահանջվում է, որ Հանձնաժողովն ընդունի պատվիրակված ակտեր՝ կապված էներգիա սպառող եւ խնայող այնպիսի արտադրանքի պիտակավորման հետ, որն ունի էներգիայի խնայողության զգալի ներուժ եւ համարժեք ֆունկցիոնալության պարագայում՝ արդյունավետության մակարդակներում էական տարբերություններ.
- 2) կենցաղային թմբուկային չորացնող մեքենաների էներգապիտակավորման դրույթները սահմանվել են Խորհրդի 92/75/ԵՏՀ հրահանգը կիրարկող՝ Հանձնաժողովի 1995 թվականի մայիսի 23-ի 95/13/ԵՀ հրահանգով՝ կապված կենցաղային էլեկտրական թմբուկային չորացնող մեքենաների էներգապիտակավորման հետ.
- 3) կենցաղային թմբուկային չորացնող մեքենաների կողմից սպառվող էներգիան կազմում է Միությունում կենցաղային նպատակներով էներգիայի ընդհանուր պահանջարկի զգալի մասը: Բացի էներգաարդյունավետության առումով արդեն իսկ կատարված բարելավումներից՝ կենցաղային թմբուկային չորացնող մեքենաների կողմից էներգիայի սպառումը հետագայում նվազեցնելու շրջանակն էական նշանակություն ունի.
- 4) 95/13/ԵՀ հրահանգը պետք է ուժը կորցրած ճանաչվի, եւ սույն կանոնակարգով պետք է նոր դրույթներ սահմանվեն՝ ապահովելու համար էներգապիտակավորման միջոցով մատակարարների համար դինամիկ խրախուսական միջոցների ստեղծումը՝ կենցաղային թմբուկային չորացնող մեքենաների էներգաարդյունավետությունն էլ ավելի բարելավելու եւ դեպի էներգաարդյունավետ տեխնոլոգիաների շուկա անցումն արագացնելու համար.

- 5) համակցված լվացող եւ չորացնող կենցաղային մեքենաները ներկայացված են Խորհրդի 92/75/ԵՏՀ հրահանգը կիրարկող՝ Հանձնաժողովի 1996 թվականի սեպտեմբերի 19-ի 96/60/ԵՀ³ «Համակցված լվացող եւ չորացնող կենցաղային մեքենաների էներգապիտակավորման մասին» հրահանգում: Դրանք ունեն հատուկ բնութագրեր, ուստի պետք է լինեն սույն կանոնակարգի կիրառության շրջանակից դուրս:
- 6) պիտակի վրա տրամադրվող տեղեկությունները պետք է ձեռք բերվեն հուսալի, ճշգրիտ եւ վերարտադրելի չափման ընթացակարգերի միջոցով, որոնցում հաշվի են առնվում չափման՝ համընդհանուր ճանաչում ունեցող նորագույն մեթոդները, այդ թվում՝ առկայության դեպքում՝ ստանդարտացման եվրոպական մարմինների կողմից ընդունված ներդաշնակեցված ստանդարտները, ինչպես թվարկված են Տեխնիկական ստանդարտների եւ կանոնակարգերի ոլորտում տեղեկությունների տրամադրման ընթացակարգը սահմանող՝ Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 1998 թվականի հունիսի 22-ի 98/34/ԵՀ հրահանգի⁴ I հավելվածում:
- 7) սույն կանոնակարգով պետք է սահմանվի կենցաղային թմբուկային չորացնող մեքենաների, այդ թվում՝ գազով աշխատող չորացնող մեքենաների պիտակների միասնական ձեւն ու բովանդակությունը:
- 8) բացի այդ, սույն կանոնակարգով կենցաղային թմբուկային չորացնող մեքենաների համար պետք է սահմանվեն տեխնիկական փաստաթղթերին եւ արտադրանքի տեղեկաթերթիկներին ներկայացվող պահանջները:
- 9) ավելին, սույն կանոնակարգով պետք է սահմանվեն կենցաղային թմբուկային չորացնող մեքենաների հեռահար վաճառքի եւ գովազդի ցանկացած տեսակի համար տրամադրվող տեղեկություններին եւ

այդպիսի սարքերի տեխնիկական գովազդային նյութերի ցանկացած տեսակին ներկայացվող պահանջները.

- 10) անհրաժեշտ է նախատեսել սույն կանոնակարգի դրույթների վերանայումը՝ տեխնոլոգիական առաջընթացը հաշվի առնելու նպատակով.
- 11) 95/13/ԵՀ հրահանգից դեպի սույն կանոնակարգ անցումը դյուրացնելու նպատակով սույն կանոնակարգին համապատասխան պիտակավորված կենցաղային թմբուկային չորացնող մեքենաները պետք է համարվեն որպես 95/13/ԵՀ հրահանգին համապատասխանող.
- 12) հետեւաբար 95/13/ԵՀ հրահանգը պետք է ուժը կորցրած ճանաչվի,

ԸՆԴՈՒՆԵՑ ՍՈՒՅՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ.

Հոդված 1

Կարգավորման առարկան եւ գործողության շրջանակը

1. Սույն կանոնակարգով սահմանվում է էլեկտրական ցանցից սնուցվող եւ գազով աշխատող կենցաղային թմբուկային չորացնող մեքենաների եւ ներկառուցված կենցաղային թմբուկային չորացնող մեքենաների, այդ թվում՝ ոչ կենցաղային նպատակներով օգտագործման համար վաճառվող չորացնող մեքենաների պիտակավորմանը եւ արտադրանքի մասին լրացուցիչ տեղեկություններին ներկայացվող պահանջները:

2. Սույն կանոնակարգը չի կիրառվում համակցված լվացող եւ չորացնող կենցաղային մեքենաների եւ կենցաղային քամիչ ցենտրիֆուգերի նկատմամբ:

Հոդված 2

Սահմանումները

Ի լրումն 2010/30/ԵՄ հրահանգի 2-րդ հոդվածով տրված սահմանումների՝ սույն կանոնակարգի իմաստով կիրառվում են հետևյալ սահմանումները.

- 1) «կենցաղային թմբուկային չորացնող մեքենա» նշանակում է սարք, որտեղ գործվածքները չորացվում են թմբկահարվելով պտտվող թմբուկում, որտեղով անցնում է տաքացված օդ, եւ որը նախատեսված է հիմնականում ոչ մասնագիտական նպատակներով օգտագործման համար.
- 2) «ներկառուցված կենցաղային թմբուկային չորացնող մեքենա» նշանակում է կենցաղային թմբուկային չորացնող մեքենա, որը նախատեսված է պահարանում, պատի մեջ կամ նմանատիպ վայրում բացված այնպիսի խորշում տեղադրման համար, որը պետք է վերջնամշակվի կահույքի միջոցով.
- 3) «համակցված լվացող եւ չորացնող կենցաղային մեքենա» նշանակում է կենցաղային լվացքի մեքենա, որն ունի եւ՝ քամիչ ցենտրիֆուգի, եւ՝ գործվածքները չորացնելու հնարավորություն՝ սովորաբար տաքացնելու կամ թմբկահարելու միջոցով.
- 4) «կենցաղային քամիչ ցենտրիֆուգ» (առետրային ոլորտում հայտնի է նաեւ որպես «կենտրոնախույս չորացնող մեքենա») նշանակում է սարք, որտեղ ջուրը ցենտրիֆուգային գործողությամբ հեռացվում է գործվածքից պտտվող թմբուկում եւ չորացվում է ավտոմատ պոմպի օգնությամբ, եւ որը նախատեսված է հիմնականում ոչ մասնագիտական նպատակներով օգտագործման համար.

- 5) «օդահան թմբուկային չորացնող մեքենա» նշանակում է թմբուկային չորացնող մեքենա, որը ներքաշում է թարմ օդ, փոխանցում է այն գործվածքին եւ դուրս է բերում արդյունքում առաջացած խոնավ օդը սենյակ կամ դուրս.
- 6) «կոնդենսատոր թմբուկային չորացնող մեքենա» նշանակում է չորացնող մեքենա, որն ունի սարք (կա՛մ կոնդենսացման, կա՛մ որեւէ այլ եղանակի կիրառմամբ)՝ նախատեսված չորացման ընթացքում օգտագործված օդից խոնավությունը հեռացնելու համար.
- 7) «ավտոմատ թմբուկային չորացնող մեքենա» նշանակում է չորացնող մեքենա, որն անցնում է չորացման գործողությանը, երբ բեռնվածքի պարունակության մեջ հայտնաբերվում է խոնավություն, օրինակ՝ էլեկտրահաղորդականության կամ ջերմաստիճանի տվիչի միջոցով.
- 8) «ոչ ավտոմատ թմբուկային չորացնող մեքենա» նշանակում է թմբուկային չորացնող մեքենա, որն անցնում է չորացման գործողությանը նախապես սահմանված ժամանակահատվածից հետո, սովորաբար կառավարվում է թայմերով, սակայն այն կարելի է կառավարվել նաեւ ձեռքով.
- 9) «ծրագիր» նշանակում է նախապես սահմանված այնպիսի գործողությունների շարք, որոնք մատակարարի կողմից ընդունելի են համարվում գործվածքի կոնկրետ տեսակներ չորացնելու համար.
- 10) «ցիկլ» նշանակում է չորացման այն ամբողջ գործընթացը, որը սահմանվել է ընտրված ծրագրի համար.
- 11) «ծրագրի ժամանակ» նշանակում է ծրագրի սկզբից մինչեւ ծրագրի ավարտն ընկած ժամանակահատված՝ բացառությամբ վերջնական սպառողի կողմից ծրագրված ցանկացած հետաձգման.

- 12) «նոմինալ տարողունակություն» նշանակում է մատակարարի կողմից նշված առավելագույն զանգվածը՝ կիլոգրամով, որը մատակարարի կողմից նշվում է 0.5 կիլոգրամով աճման կարգով՝ կոնկրետ տեսակի չոր գործվածքի համար, որը ընտրված ծրագրով կարող է չորացվել կենցաղային թմբուկային չորացնող մեքենայով, եթե այն բեռնվում է մատակարարի հրահանգների համաձայն.
- 13) «մասնակի բեռնվածք» նշանակում է տվյալ ծրագրի համար կենցաղային թմբուկային չորացնող մեքենայի նոմինալ տարողունակության կեսը.
- 14) «կոնդենսացման արդյունավետություն» նշանակում է կոնդենսատոր թմբուկային չորացնող մեքենայի կոնդենսացրած խոնավության զանգվածի եւ ցիկլի վերջում բեռնվածքից հեռացված խոնավության զանգվածի հարաբերությունը.
- 15) «անջատված ռեժիմ» նշանակում է մի վիճակ, որին կենցաղային թմբուկային չորացնող մեքենան անցնում է սարքի կառավարման այնպիսի միջոցներով կամ գործարկիչներով, որոնք նվազագույն էներգիայի սպառում ապահովելու նպատակով հասանելի են եւ նախատեսված են սովորական օգտագործման ժամանակ վերջնական սպառողի կողմից գործարկվելու համար, ինչը կարող է շարունակվել անորոշ ժամանակ, երբ կենցաղային թմբուկային չորացնող մեքենան միացված է հոսանքի աղբյուրին եւ օգտագործվում է մատակարարի հրահանգների համաձայն.. եթե վերջնական սպառողի համար հասանելի չեն կառավարման միջոցներ կամ գործարկիչներ, «անջատված ռեժիմ»-ը նշանակում է այնպիսի վիճակ, որը տեղի է ունենում այն բանից հետո, երբ կենցաղային թմբուկային չորացնող մեքենան ինքնուրույն անցնում է էներգիայի սպառման հաստատուն ռեժիմին.

- 16) «միացված ռեժիմ» նշանակում է նվազագույն էներգիայի սպառման ռեժիմ, որը ծրագիրն ավարտվելուց հետո կարող է շարունակվել անորոշ ժամանակ, եւ որի համար վերջնական սպառողից չի պահանջվում որեւէ լրացուցիչ միջամտություն՝ բացառությամբ կենցաղային թմբուկային չորացնող մեքենան դատարկելուց.
- 17) «կենցաղային թմբուկային չորացնող մեքենայի համարժեք» նշանակում է միեւնույն մատակարարի կողմից այլ առետրային կողով շուկայահանված կենցաղային թմբուկային չորացնող մեքենայի մեկ այլ մոդել, որը շուկայահանվել է նույն նոմինալ տարողունակությամբ, տեխնիկական եւ շահագործման բնութագրիչներով, էներգիայի սպառմամբ, համապատասխան դեպքերում՝ կոնդենսացման արդյունավետությամբ, բամբակյա գործվածքի համար նախատեսված ստանդարտ ծրագրի ժամանակով եւ չորացման ընթացքում օդով փոխանցվող ակուստիկ աղմուկի արտադրման մակարդակով.
- 18) «վերջնական սպառող»՝ սպառող, որը գնում է կամ ակնկալվում է, որ կգնի կենցաղային թմբուկային չորացնող մեքենան.
- 19) «վաճառքի կետ»՝ վայր, որտեղ կենցաղային թմբուկային չորացնող մեքենաները ցուցադրված են կամ առաջարկվում են վաճառքի, վարձակալության կամ ապառիկ գնման համար:
- 20) «բամբակյա գործվածքի համար նախատեսված ստանդարտ ծրագիր» նշանակում է ցիկլ, որի ժամանակ բեռնվածքի 60% նախնական խոնավության պարունակությամբ բամբակյա լվացքը չորացվում է այնքան, մինչեւ բեռնվածքի մնացորդային խոնավության պարունակությունը հավասարվի 0%-ի:

*Հոդված 3***Մատակարարների պարտականությունները**

Մատակարարներն ապահովում են, որ՝

- ա) յուրաքանչյուր կենցաղային թմբուկային չորացնող մեքենա համալրված լինի I հավելվածով սահմանված ձեւաչափով եւ տեղեկությունների պարունակությամբ տպագրված պիտակով.
- բ) տրամադրվի արտադրանքի տեղեկաթերթիկը, ինչպես ներկայացված է II հավելվածում.
- գ) անդամ պետությունների մարմիններին եւ Հանձնաժողովին ներկայացված պահանջի դեպքում տրամադրվեն III հավելվածում նշված տեխնիկական փաստաթղթերը.
- դ) կենցաղային թմբուկային չորացնող մեքենայի կոնկրետ մոդելի ցանկացած գովազդում նշվի էներգաարդյունավետության դասը, եթե գովազդում հրապարակվում են էներգիայի սպառման կամ գնի վերաբերյալ տեղեկություններ.
- ե) կենցաղային թմբուկային չորացնող մեքենայի կոնկրետ մոդելի վերաբերյալ ցանկացած տեխնիկական գովազդային նյութ, որով նկարագրվում է դրա ցանկացած տեխնիկական պարամետր, ընդգրկի այդ մոդելի էներգաարդյունավետության դասի մասին տեղեկություններ:

Հոդված 4

Դիլերների պարտականությունները

Դիլերներն ապահովում են, որ՝

- ա) յուրաքանչյուր կենցաղային թմբուկային չորացնող մեքենա վաճառքի կետում, Յ(ա) հոդվածին համապատասխան, դիմային մասի վրա կամ սարքի վերին մասում դրսից կրի մատակարարների կողմից տրամադրված պիտակն այնպես, որ այն հստակ տեսանելի լինի.
- բ) վաճառքի, վարձակալության կամ ապառիկ գնման համար առաջարկվող կենցաղային թմբուկային չորացնող մեքենաներն այն դեպքերում, երբ չի կարելի ակնկալել, որ վերջնական սպառողը կտեսնի ցուցադրված արտադրատեսակը, ինչպես սահմանված է 2010/30/ԵՄ հրահանգի 7-րդ հոդվածով, շուկայահանվեն սույն կանոնակարգի IV հավելվածին համապատասխան՝ մատակարարի կողմից տրամադրված տեղեկության զետեղմամբ.
- գ) կենցաղային թմբուկային չորացնող մեքենայի կոնկրետ մոդելի ցանկացած գովազդում նշվի էներգաարդյունավետության դասը, եթե գովազդը պարունակում է էներգիայի սպառման կամ գնի վերաբերյալ տեղեկություն.
- դ) կենցաղային թմբուկային չորացնող մեքենայի կոնկրետ մոդելին վերաբերող եւ դրան բնորոշ տեխնիկական պարամետրերը նկարագրող ցանկացած տեխնիկական գովազդային նյութ ընդգրկի այդ մոդելի էներգաարդյունավետության դասի վերաբերյալ հղում:

Հոդված 5

Չափման մեթոդները

3-րդ եւ 4-րդ հոդվածների համաձայն տրամադրվելիք տեղեկությունները ձեռք են բերվում հուսալի, ճշգրիտ եւ վերարտադրելի չափման այնպիսի ընթացակարգերով, որոնցում հաշվի են առնվում համընդհանուր ճանաչում ունեցող ժամանակակից չափման մեթոդները:

Հոդված 6

Շուկայի վերահսկողության նպատակներով իրականացվող ստուգման ընթացակարգը

Նշված էներգաարդյունավետության դասին, մեկ ցիկլի ընթացքում էներգիայի սպառմանը, անհրաժեշտության դեպքում կոնդենսացիայի արդյունավետության դասին, նոմինալ տարողունակությանը, անջատված եւ միացված ռեժիմում էներգիայի սպառմանը, միացված ռեժիմի տեւողությանը, ծրագրի ժամանակին եւ օդով փոխանցվող ակուստիկ աղմուկի արտադրման մակարդակներին համապատասխանությունը գնահատելու նպատակով անդամ պետությունները կիրառում են V հավելվածով սահմանված ընթացակարգը:

Հոդված 7

Վերանայումը

Հանձնաժողովը վերանայում է սույն կանոնակարգը տեխնոլոգիական առաջընթացի տեսանկյունից՝ այն ուժի մեջ մտնելուց հետո ոչ ուշ, քան հինգ

տարի անց: Վերանայմամբ մասնավորապես գնահատվում են V հավելվածով սահմանված ստուգման ընթացքում թույլատրելի շեղումները:

Հոդված 8

Ուժը կորցրած ճանաչելը

95/13/ԵՀ հրահանգն ուժը կորցրած է ճանաչվում 2012 թվականի մայիսի 29-ից:

Հոդված 9

Անցումային դրույթներ

1. 3(դ) եւ 3(ե), ինչպես նաեւ 4(բ), 4(գ) եւ 4(դ) հոդվածները չեն կիրառվում մինչեւ 2012 թվականի սեպտեմբերի 29-ը հրապարակված տպագիր գովազդների եւ տպագիր տեխնիկական գովազդային նյութերի նկատմամբ:
2. Մինչեւ 2012 թվականի մայիսի 29-ը շուկայահանված կենցաղային թմբուկային չորացնող մեքենաները պետք է համապատասխանեն 95/13/ԵՀ հրահանգով սահմանված դրույթներին:
3. Այն կենցաղային թմբուկային չորացնող մեքենաները, որոնք համապատասխանում են սույն կանոնակարգի դրույթներին, եւ որոնք շուկայահանված են կամ առաջարկվում են վաճառքի, վարձակալության կամ ապառիկ գնման համար մինչեւ 2012 թվականի մայիսի 29-ը, համարվում են 95/13/ԵՀ հրահանգի պահանջներին համապատասխանող:

*Հոդված 10***Ուժի մեջ մտնելը եւ կիրառությունը**

1. Սույն կանոնակարգն ուժի մեջ է մտնում Եվրոպական միության պաշտոնական տեղեկագրում հրապարակվելուց հետո քսաներորդ օրը:
2. Այն կիրառվում է 2012 թվականի մայիսի 29-ից: Այնուամենայնիվ, 3(դ) եւ 3(ե), ինչպես նաեւ 4(բ), 4(գ) եւ 4(դ) հոդվածները կիրառվում են 2012 թվականի սեպտեմբերի 29-ից:

Սույն կանոնակարգն ամբողջությամբ պարտադիր է անմիջականորեն կիրառելի է բոլոր անդամ պետություններում:

Կատարված է Բրյուսելում 2012 թվականի մարտի 1-ին:

Հանձնաժողովի կողմից՝


Նախագահ

Ժոզե Մանուել ԲԱՂՈՋՈՒ

ՀԱՎԵԼՎԱԾ I

Պիտակ

1. ՕԴԱՀԱՆ ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ԹՄԲՈՒԿԱՅԻՆ ՉՈՐԱՅՆՈՂ ՄԵՔԵՆԱՅԻ ՊԻՏԱԿԸ



I
II

III

IV

V
VI
VII
VIII

1.1. Օդահան կենցաղային թմբուկային չորացնող մեքենայի պիտակը պետք է պարունակի հետևյալ տեղեկությունները՝

- I. մատակարարի անվանումը կամ ապրանքային նշանը.
- II. մատակարարի տրամադրած մոդելի նույնականացուցիչը, որն այն ծածկագիրն է՝ սովորաբար տառաթվային, որով կենցաղային թմբուկային չորացնող մեքենայի կոնկրետ մոդելը տարբերակվում է նույն ապրանքային նշանով կամ մատակարարի անվանմամբ այլ մոդելներից.
- III. էներգաարդյունավետության դասը, ինչպես սահմանված է VI հավելվածի 1-ին կետում. կենցաղային թմբուկային չորացնող մեքենայի էներգաարդյունավետության դասը պարունակող սլաքի ծայրը պետք է զետեղված լինի նույն բարձրության վրա, ինչ համապատասխան էներգաարդյունավետության դասի սլաքի ծայրը.
- IV. հաշվարկված տարեկան էներգասպառումը (AEC)՝ կՎտժ/տարի-ով, կլորացված մինչև ամենամոտ ամբողջ թիվը եւ հաշվարկված VII հավելվածի համաձայն.
- V. տեղեկություն՝ կենցաղային թմբուկային չորացնող մեքենայի տեսակի մասին.
- VI. լրիվ բեռնվածքի պարագայում բամբակյա գործվածքի համար նախատեսված ստանդարտ ծրագրին համապատասխանող ցիկլի ժամանակը՝ րոպեով եւ կլորացված մինչև րոպեի ամենամոտ ամբողջ արժեքը.
- VII. լրիվ բեռնվածքի պարագայում բամբակյա գործվածքի համար նախատեսված ստանդարտ ծրագրի դեպքում նոմինալ տարողունակությունը՝ կիլոգրամով.
- VIII. լրիվ բեռնվածքի պարագայում բամբակյա գործվածքի համար


նախատեսված ստանդարտ ծրագրի դեպքում ձայնի հզորության մակարդակը (հաշվարկված միջին արժեք - LwA) չորացման փուլի ընթացքում՝ արտահայտված դեցիբելով (դԲ), կլորացված մինչեւ ամենամոտ ամբողջ թիվը:

- 1.2. Օդահան կենցաղային թմբուկային չորացնող մեքենաների պիտակների ձեւը պետք է համապատասխանի սույն հավելվածի 4-րդ կետին:

Եթե Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի թիվ 66/2010 կանոնակարգի (ԵՀ) համաձայն¹ մոդելին շնորհվել է «ԵՄ էկոպիտակ», ապա կարող է ավելացվել ԵՄ էկոպիտակի պատճենը:

¹ ՊՏ L 27, 30. 01.2010թ., էջ 1:

2. ԿՈՆԴԵՆՍԱՏՈՐ ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ԹՄԲՈՒԿԱՅԻՆ ՉՈՐԱՅՆՈՂ ՄԵՔԵՆԱՅԻ ՊԻՏԱԿԸ



I
II

III

IV

V
VI
VII
VIII


IX

2.1. Ի հավելումն 1.1 կետում թվարկված տեղեկությունների՝ կոնդենսատոր կենցաղային թմբուկային չորացնող մեքենայի պիտակը պետք է պարունակի հետևյալը՝

IX. կոնդենսացման արդյունավետության դասը՝ VI հավելվածի 2-րդ կետի համաձայն:

2.2. Կոնդենսատոր կենցաղային թմբուկային չորացնող մեքենայի պիտակի ձևը պետք է համապատասխանի սույն հավելվածի 4-րդ կետին: Եթե թիվ 66/2010 (ԵՀ) կանոնակարգի համաձայն մոդելին շնորհվել է «ԵՄ էկոպիտակ», ապա կարող է ավելացվել ԵՄ էկոպիտակի պատճենը:

3. ԳԱԶՈՎ ԱՇԽԱՏՈՂ ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ԹՄԲՈՒԿԱՅԻՆ ՉՈՐԱՑՆՈՂ ՄԵՔԵՆԱՅԻ ՊԻՏԱԿԸ



I
II

III

IV

V
VI
VII
VIII


*цикъл · cyklus · portion · zyklus · πρόγραμμα · ciclo · tsükkel · ohjelma · ciklus ciklas · cikls · ciklu · cyclus · cykl · ciclu · program · torkomgång

3.1. 1.1 կետում թվարկված տեղեկությունները պետք է ընդգրկվեն գազով աշխատող կենցաղային թմբուկային չորացնող մեքենաների պիտակներում:

3.2. Գազով աշխատող կենցաղային թմբուկային չորացնող մեքենաների պիտակի ձեւը պետք է համապատասխանի սույն հավելվածի 4-րդ կետին: Եթե թիվ 66/2010 (ԵՀ) կանոնակարգի համաձայն մոդելին շնորհվել է «ԵՄ էկոպիտակ», ապա կարող է ավելացվել ԵՄ էկոպիտակի պատճենը:

4. ՊԻՏԱԿԻ ՁԵՎԸ

4.1. Օդահան կենցաղային թմբուկային չորացնող մեքենաների դեպքում պիտակների ձեւը պետք է համապատասխանի ստորեւ բերված պատկերին:



Որտեղ՝

- ա) պիտակը պետք է ունենա առնվազն 110 մմ լայնություն եւ 220 մմ բարձրություն: Եթե պիտակը տպագրված է ավելի մեծ ձեւաչափով, ապա դրա բովանդակությունը պետք է, այնուամենայնիվ, համապատասխանի վերը նշված մասնագրերին.
- բ) Ֆոնը պետք է լինի սպիտակ.
- գ) գույները՝ ԿԿԴՄ՝ կապտականաչ, կարմրամանուշակագույն, դեղին, սեւ, ինչպես հետեւյալ օրինակում՝ 00-70-X-00՝ 0% կապտականաչ, 70% կարմրամանուշակագույն, 100% դեղին, 0% սեւ.
- դ) պիտակը պետք է բավարարի հետեւյալ բոլոր պահանջները (թվերը վերաբերում են վերոնշյալ պատկերին):

1. **ԵՄ պիտակի սահմանագիծը՝** 5 կետ, գույն՝ 100% կապտականաչ, կլոր անկյուններ՝ 3,5 մմ:
2. **ԵՄ լոգոն (պատկերանիշը)՝** գույներ՝ X-80-00-00 եւ 00-00-X-00:
3. **Էներգապիտակը՝** գույն՝ X-00-00-00: Գրաֆիկական պատկերը՝ ինչպես ցուցադրված է. ԵՄ լոգո եւ Էներգիայի լոգո (համակցված)՝ լայնություն՝ 92 մմ, բարձրություն՝ 17 մմ:
4. **Լոգոյի տակ գտնվող եզրագիծը՝** 1 կետ, գույն՝ 100% կապտականաչ, երկարություն՝ 92,5 մմ:
5. **A-ից G սանդղակը**
 - Սլաք՝ բարձրություն՝ 7 մմ, տարածություն՝ 0,75 մմ՝ գույներ՝
Ամենաբարձր դասը՝ X-00-X-00,
Երկրորդ դասը՝ 70-00-X-00,
Երրորդ դասը՝ 30-00-X-00,

Չորրորդ դասը՝ 00-00-X-00,

Հինգերորդ դասը՝ 00-30-X-00,

Վեցերորդ դասը՝ 00-70-X-00,

Վերջին դասը՝ 00-X-X-00:

- **Տեքստ՝** «Կալիբրի» տառատեսակ, թավ 18 կետ, մեծատառ եւ սպիտակ, «+» պայմանանշաններ, «Կալիբրի» տառատեսակ, թավ 12 կետ, սպիտակ, գտնվում են մեկ շարքի վրա:

6. Էներգաարդյունավետության դասը

- **Սլաք՝** լայնություն՝ 26 մմ, բարձրություն՝ 14 մմ, 100% սեւ:
- **Տեքստ՝** «Կալիբրի» տառատեսակ, թավ 29 կետ, մեծատառ եւ սպիտակ, «+» պայմանանշաններ, «Կալիբրի» տառատեսակ, թավ 18 կետ, սպիտակ, գտնվում են մեկ շարքի վրա:

7. Էներգիա

- **Տեքստ՝** «Կալիբրի» տառատեսակ, սովորական 11 կետ, մեծատառեր, 100% սեւ:

8. Հաշվարկված տարեկան էներգասպառումը

- **Եզրագիծ՝** 2 կետ, գույն՝ 100% կապտականաչ, կլոր անկյուններ՝ 3,5 մմ:
- **Արժեք՝** «Կալիբրի» տառատեսակ, թավ 30 կետ, 100% սեւ:
- **Երկրորդ տող՝** «Կալիբրի» տառատեսակ, սովորական 14 կետ, 100% սեւ:

9. Կենցաղային թմբուկային չորացնող մեքենայի տեսակը

- **Գրաֆիկական պատկերը՝** ինչպես ցուցադրված է
- **Եզրագիծ՝** 2 կետ, գույն՝ 100% կապտականաչ, կլոր անկյուններ՝

3,5 մմ:

10. Ցիկլի ժամանակը

- Գրաֆիկական պատկեր՝ ինչպես ցուցադրված է
- Եզրագիծ՝ 2 կետ, գույն՝ 100% կապտականաչ, կլոր անկյուններ՝ 3,5 մմ:
- Արժեք՝ «Կալիբրի» տառատեսակ, թավ 24 կետ, 100% սեւ եւ «Կալիբրի» տառատեսակ, սովորական 16 կետ, 100% սեւ:

11. Նոմինալ տարողունակությունը

- Գրաֆիկական պատկեր՝ ինչպես ցուցադրված է
- Եզրագիծ՝ 2 կետ, գույն՝ 100% կապտականաչ, կլոր անկյուններ՝ 3,5 մմ:
- Արժեք՝ «Կալիբրի» տառատեսակ, թավ 24 կետ, 100% սեւ եւ «Կալիբրի» տառատեսակ, սովորական 16 կետ, 100% սեւ:

12. Ձայնի հզորության մակարդակը

- Գրաֆիկական պատկեր՝ ինչպես ցուցադրված է
- Եզրագիծ՝ 2 կետ, գույն՝ 100% կապտականաչ, կլոր անկյուններ՝ 3,5 մմ:
- Արժեք՝ «Կալիբրի» տառատեսակ, թավ 24 կետ, 100% սեւ եւ «Կալիբրի» տառատեսակ, սովորական 16 կետ, 100% սեւ:

13. Աստղանիշը՝ «Կալիբրի» տառատեսակ, սովորական 6 կետ, 100% սեւ:

14. Մատակարարի անվանումը կամ ապրանքային նշանը


15. Մատակարարի տրամադրած մոդելի նույնականացուցիչը

16. Մատակարարի անվանումը կամ ապրանքային նշանը եւ մոդելի նույնականացուցիչը պետք է տեղավորվեն 92 x 15 մմ տարածության

մեջ:

17 **Կանոնակարգի համարակալումը՝ «Կալիբրի»** տառատեսակ, թավ 9 կետ, 100% սեւ:

4.2. Կոնդենսատոր կենցաղային թմբուկային չորացնող մեքենաների դեպքում պիտակի ձեւը պետք է համապատասխանի ստորեւ բերված պատկերին:



Որտեղ՝

- ա) պիտակը պետք է ունենա առնվազն 110 մմ լայնություն եւ 220 մմ բարձրություն: Եթե պիտակը տպագրված է ավելի մեծ ձեւաչափով, ապա դրա բովանդակությունը պետք է, այնուամենայնիվ, համապատասխանի վերը նշված մասնագրերին.
- բ) Ֆոնը պետք է լինի սպիտակ.
- գ) գույները՝ ԿԿԴՄ՝ կապտականաչ, կարմրամանուշակագույն, դեղին, սեւ, ինչպես հետեւյալ օրինակում՝ 00-70-X-00՝ 0% կապտականաչ, 70% կարմրամանուշակագույն, 100% դեղին, 0% սեւ.
- դ) պիտակը պետք է բավարարի հետեւյալ բոլոր պահանջները (թվերը վերաբերում են վերոնշյալ պատկերին):
1. **ԵՄ պիտակի սահմանագիծը՝** 5 կետ, գույն՝ կապտականաչ 100%, կլոր անկյուններ՝ 3,5 մմ:
 2. **ԵՄ լոգոն (պատկերանիշը)՝** գույներ՝ X-80-00-00 եւ 00-00-X-00:
 3. **Էներգապիտակը՝** գույն՝ X-00-00-00: Գրաֆիկական պատկերը՝ ինչպես ցուցադրված է. ԵՄ լոգո եւ էներգիայի լոգո (համակցված)՝ լայնություն՝ 92 մմ, բարձրություն՝ 17 մմ:
 4. **Լոգոյի տակ գտնվող եզրագիծը՝** 1 կետ, գույն՝ 100% կապտականաչ, երկարություն՝ 92,5 մմ:
 5. **A-ից G սանդղակը**
 - Սլաք՝ բարձրություն՝ 7 մմ, տարածություն՝ 0,75 մմ, գույներ՝
Ամենաբարձր դասը՝ X-00-X-00,
Երկրորդ դասը՝ 70-00-X-00,
Երրորդ դասը՝ 30-00-X-00,

Չորրորդ դասը՝ 00-00-X-00,

Հինգերորդ դասը՝ 00-30-X-00,

Վեցերորդ դասը՝ 00-70-X-00,

Վերջին դասը՝ 00-X-X-00:

- **Տեքստ**՝ «Կալիբրի» տառատեսակ, թավ 18 կետ, մեծատառ եւ սպիտակ, «+» պայմանանշաններ, «Կալիբրի» տառատեսակ, թավ 12 կետ, սպիտակ, գտնվում են մեկ շարքի վրա:

6. Էներգաարդյունավետության դասը

- **Սլաք**՝ լայնություն՝ 26 մմ, բարձրություն՝ 14 մմ, 100% սեւ:
- **Տեքստ**՝ «Կալիբրի» տառատեսակ, թավ 29 կետ, մեծատառ եւ սպիտակ, «+» պայմանանշաններ, «Կալիբրի» տառատեսակ, թավ 18 կետ, սպիտակ, գտնվում են մեկ շարքի վրա:

7. Էներգիա

- **Տեքստ**՝ «Կալիբրի» տառատեսակ, սովորական 11 կետ, մեծատառ, 100% սեւ:

8. Հաշվարկված տարեկան էներգասպառումը

- **Եզրագիծ**՝ 2 կետ, գույն՝ 100% կապտականաչ, կլոր անկյուններ՝ 3,5 մմ:
- **Արժեք**՝ «Կալիբրի» տառատեսակ, թավ 30 կետ, 100% սեւ:
- **Երկրորդ տող**՝ «Կալիբրի» տառատեսակ, սովորական 14 կետ, 100% սեւ:

9. Կենցաղային թմբուկային չորացնող մեքենայի տեսակը

- **Գրաֆիկական պատկեր՝ ինչպես ցուցադրված է**
- **Եզրագիծ**՝ 2 կետ, գույն՝ 100% կապտականաչ, կլոր անկյուններ՝

3,5 մմ:

10. Ցիկլի ժամանակը

— **Գրաֆիկական պատկեր՝ ինչպես ցուցադրված է**

— **Եզրագիծ՝** 2 կետ, գույն՝ 100% կապտականաչ, կլոր անկյուններ՝ 3,5 մմ:

— **Արժեք՝** «Կալիբրի» տառատեսակ, թավ 24 կետ, 100% սեւ եւ «Կալիբրի» տառատեսակ, սովորական 16 կետ, 100 % սեւ:

11. Նոմինալ տարողունակությունը

— **Գրաֆիկական պատկեր՝ ինչպես ցուցադրված է**

— **Եզրագիծ՝** 2 կետ, գույն՝ 100% կապտականաչ, կլոր անկյուններ՝ 3,5 մմ:

— **Արժեք՝** «Կալիբրի» տառատեսակ, թավ 24 կետ, 100 % սեւ եւ «Կալիբրի» տառատեսակ, սովորական 16 կետ, 100 % սեւ:

12. Ձայնի հզորության մակարդակը

— **Գրաֆիկական պատկեր՝ ինչպես ցուցադրված է**

— **Եզրագիծ՝** 2 կետ, գույն՝ 100% կապտականաչ, կլոր անկյուններ՝ 3,5 մմ:

— **Արժեք՝** «Կալիբրի» տառատեսակ, թավ 24 կետ, 100 % սեւ եւ «Կալիբրի» տառատեսակ, սովորական 16 կետ, 100% սեւ:

13. **Աստղանիշը՝** «Կալիբրի» տառատեսակ, սովորական 6 կետ, 100% սեւ:


14. **Մատակարարի անվանումը կամ ապրանքային նշանը**

15. **Մատակարարի տրամադրած մոդելի նույնականացուցիչը**

16. Մատակարարի անվանումը կամ ապրանքային նշանը եւ մոդելի նույնականացուցիչը պետք է տեղավորվեն 92 x 15 մմ տարածության

մեջ:

17. **Կանոնակարգի համարակալումը՝ «Կալիբրի»** տառատեսակ, թավ 9 կետ, 100% սեւ:
 18. **Կոնդենսացման արդյունավետության դասը**
 - **Գրաֆիկական պատկեր՝ ինչպես ցուցադրված է**
 - **Եզրագիծ՝** 2 կետ, գույն՝ 100% կապտականաչ, կլոր անկյուններ՝ 3,5 մմ:
 - **Արժեք՝** «Կալիբրի» տառատեսակ, սովորական 16 կետ, հորիզոնական սանդղակ 75%, 100% սեւ եւ «Կալիբրի» տառատեսակ, թավ 22 կետ, հորիզոնական սանդղակ 75%, 100% սեւ:
- 4.3. Գագրվ աշխատող կենցաղային թմբուկային չորացնող մեքենաների դեպքում պիտակների ձեւը պետք է համապատասխանի ստորեւ բերված պատկերին:



Որտեղ՝

- ա) պիտակը պետք է ունենա առնվազն 110 մմ լայնություն եւ 220 մմ բարձրություն: Եթե պիտակը տպագրված է ավելի մեծ ձեւաչափով, ապա դրա բովանդակությունը պետք է, այնուամենայնիվ, համապատասխանի վերը նշված մասնագրերին.
- բ) Ֆոնը պետք է լինի սպիտակ.
- գ) գույները՝ ԿԿԴՄ՝ կապտականաչ, կարմրամանուշակագույն, դեղին, սեւ, ինչպես հետեւյալ օրինակում՝ 00-70-X-00՝ 0% կապտականաչ, 70% կարմրամանուշակագույն, 100% դեղին, 0% սեւ.
- դ) պիտակը պետք է բավարարի հետեւյալ բոլոր պահանջները (թվերը վերաբերում են վերոնշյալ պատկերին):

1. **ԵՄ պիտակի սահմանագիծը՝** 5 կետ, գույն՝ 100% կապտականաչ, կլոր անկյուններ՝ 3,5 մմ:
2. **ԵՄ լոգոն (պատկերանիշը)՝** գույներ՝ X-80-00-00 եւ 00-00-X-00:
3. **Էներգապիտակը՝** գույն՝ X-00-00-00: Գրաֆիկական պատկերը՝ ինչպես ցուցադրված է. ԵՄ լոգո եւ էներգիայի լոգո (համակցված)՝ լայնություն՝ 92 մմ, բարձրություն՝ 17 մմ:
4. **Լոգոյի տակ գտնվող եզրագիծը՝** 1 կետ, գույն՝ 100% կապտականաչ, երկարություն՝ 92,5 մմ:
5. **A-ից G սանդղակը**

— Սլաք՝ բարձրություն՝ 7 մմ, տարածություն՝ 0,75 մմ, գույներ՝

Ամենաբարձր դասը՝ X-00-X-00,

Երկրորդ դասը՝ 70-00-X-00,

Երրորդ դասը՝ 30-00-X-00,

Չորրորդ դասը՝ 00-00-X-00,

Հինգերորդ դասը՝ 00-30-X-00,

Վեցերորդ դասը՝ 00-70-X-00,

Վերջին դասը՝ 00-X-X-00:

- **Տեքստ՝** «Կալիբրի» տառատեսակ, թավ 18 կետ, մեծատառ եւ սպիտակ, «+» պայմանանշաններ, «Կալիբրի» տառատեսակ, թավ 12 կետ, սպիտակ, գտնվում են մեկ շարքի վրա:

6. Էներգաարդյունավետության դասը

- **Սլաք՝** լայնություն՝ 26 մմ, բարձրություն՝ 14 մմ, 100% սեւ:
- **Տեքստ՝** «Կալիբրի» տառատեսակ, թավ 29 կետ, մեծատառ եւ սպիտակ, «+» պայմանանշաններ, «Կալիբրի» տառատեսակ, թավ 18 կետ, սպիտակ, գտնվում են մեկ շարքի վրա:

7. Էներգիա

- **Տեքստ՝** «Կալիբրի» տառատեսակ, սովորական 11 կետ, մեծատառ, 100% սեւ:

8. Հաշվարկված տարեկան էներգասպառումը

- **Եզրագիծ՝** 2 կետ, գույն՝ 100% կապտականաչ, կլոր անկյուններ՝ 3,5 մմ:
- **Արժեք՝** «Կալիբրի» տառատեսակ, թավ 30 կետ, 100% սեւ:

Երկրորդ տող՝ «Կալիբրի» տառատեսակ, սովորական 14 կետ, 100% սեւ:

9. Կենցաղային թմբուկային չորացնող մեքենայի տեսակը

- **Գրաֆիկական պատկեր՝** ինչպես ցուցադրված է

- **Եզրագիծ՝** 2 կետ, գույն՝ 100% կապտականաչ, կլոր անկյուններ՝ 3,5 մմ:

10. Ցիկլի ժամանակը

- **Գրաֆիկական պատկեր՝ ինչպես ցուցադրված է**
- **Եզրագիծ՝** 2 կետ, գույն՝ 100% կապտականաչ, կլոր անկյուններ՝ 3,5 մմ:
- **Արժեք՝** «Կալիբրի» տառատեսակ, թավ 24 կետ, 100% սեւ եւ «Կալիբրի» տառատեսակ, սովորական 16 կետ, 100% սեւ:

11. Նոմինալ տարողունակությունը

- **Գրաֆիկական պատկեր՝ ինչպես ցուցադրված է**
- **Եզրագիծ՝** 2 կետ, գույն՝ 100% կապտականաչ, կլոր անկյուններ՝ 3,5 մմ:
- **Արժեք՝** «Կալիբրի» տառատեսակ, թավ 24 կետ, 100% սեւ եւ «Կալիբրի» տառատեսակ, սովորական 16 կետ, 100% սեւ:

12. Ձայնի հզորության մակարդակը

- **Գրաֆիկական պատկեր՝ ինչպես ցուցադրված է**
- **Եզրագիծ՝** 2 կետ, գույն՝ 100% կապտականաչ, կլոր անկյուններ՝ 3,5 մմ:
- **Արժեք՝** «Կալիբրի» տառատեսակ, թավ 24 կետ, 100% սեւ եւ «Կալիբրի» տառատեսակ, սովորական 16 կետ, 100% սեւ:

13. Աստղանիշը՝ «Կալիբրի» տառատեսակ, սովորական 6 կետ, 100% սեւ:

14. Մատակարարի անվանումը կամ ապրանքային նշանը

15. Մատակարարի տրամադրած մոդելի նույնականացուցիչը

16. Մատակարարի անվանումը կամ ապրանքային նշանը եւ մոդելի նույնականացուցիչը պետք է տեղավորվեն 92 x 15 մմ տարածության մեջ:
 17. **Կանոնակարգի համարակալումը՝** «Կալիբրի» տառատեսակ, թավ 9 կետ, 100% սեւ:
-

*ՀԱՎԵԼՎԱԾ II***Արտադրանքի տեղեկաթերթիկը**

1. Կենցաղային թմբուկային չորացնող մեքենաների արտադրանքի տեղեկաթերթիկում պարունակվող տեղեկությունները պետք է ներկայացվեն հետևյալ հաջորդականությամբ եւ պետք է ընդգրկվեն արտադրանքի մասին բրոշյուրում կամ արտադրանքի հետ ներկայացվող այլ գրականության մեջ՝
 - ա) մատակարարի անվանումը կամ ապրանքային նշանը.
 - բ) մատակարարի տրամադրած մոդելի նույնականացուցիչը, որն այն ծածկագիրն է՝ սովորաբար տառաթվային, որով տարբերակվում է կենցաղային թմբուկային չորացնող մեքենայի կոնկրետ մոդելը նույն ապրանքային նշանով կամ մատակարարի անվանմամբ այլ մոդելներից.
 - գ) բամբակյա լվացքի համար կիրառված արտահայտված նոմինալ տարողունակությունը՝ լրիվ բեռնվածքի դեպքում ստանդարտ ծրագրի համար.
 - դ) տեղեկություններ այն մասին՝ արդյոք կենցաղային թմբուկային չորացնող մեքենան հանդիսանում է օդահան, կոնդենսատոր, թե գազով աշխատող կենցաղային թմբուկային չորացնող մեքենա.
 - ե) էներգաարդյունավետության դասը՝ VI հավելվածի 1-ին կետի համաձայն.
 - զ) էլեկտրական ցանցից սնուցվող կենցաղային թմբուկային չորացնող մեքենաների դեպքում՝
հաշվարկված տարեկան էներգասպառումը (AEJ)՝ կլորացված մինչեւ մեկ տասնորդական նիշը. այն պետք է նկարագրվի հետևյալ կերպ՝ «էներգասպառումը՝ «X» կՎտ.ժամ/տարի՝ լրիվ եւ

մասնակի բեռնվաճքով 160 չորացնող ցիկլ ունեցող՝ բամբակյա գործվածքի համար նախատեսված ստանդարտ ծրագրի դեպքում: Մեկ ցիկլի ժամանակ փաստացի էներգասպառումը կախված է նրանից, թե ինչպես է սարքն օգտագործվում».

գազով աշխատող կենցաղային թմբուկային չորացնող մեքենաների դեպքում՝

հաշվարկված տարեկան էներգասպառումը (AEC(Cas))՝ կլորացված մինչևե մեկ տասնորդական նիշը. այն պետք է նկարագրվի հետևյալ կերպ՝ «էներգասպառումը՝ «X» կՎտ.ժամ/գազ/տարի՝ լրիվ եւ մասնակի բեռնվաճքով 160 չորացնող ցիկլ ունեցող՝ բամբակյա գործվածքի համար նախատեսված ստանդարտ ծրագրի դեպքում: Մեկ ցիկլի ժամանակ փաստացի էներգասպառումը կախված է նրանից, թե ինչպես է սարքն օգտագործվում».

եւ

հաշվարկված տարեկան էներգասպառումը (AEC(Gas)el)՝ կլորացված մինչևե մեկ տասնորդական նիշը. այն պետք է նկարագրվի հետևյալ կերպ՝ «էներգասպառումը՝ X կՎտ.ժամ/տարի՝ լրիվ եւ մասնակի բեռնվաճքով 160 չորացնող ցիկլ ունեցող՝ բամբակյա գործվածքի համար նախատեսված ստանդարտ ծրագրի դեպքում, եւ սպառումը՝ ցածր լարման ռեժիմների ժամանակ: Մեկ ցիկլի ժամանակ փաստացի էներգասպառումը կախված է նրանից, թե ինչպես է սարքն օգտագործվում».

- է) տեղեկություններ այն մասին, թե կենցաղային թմբուկային չորացնող մեքենան ավտոմատ, թե ոչ ավտոմատ թմբուկային չորացնող մեքենա է.

- ը) այս տեղեկությունները կարող են ընդգրկվել, եթե թիվ 66/2010 կանոնակարգի (ԵՀ) համաձայն կենցաղային թմբուկային չորացնող մեքենային շնորհվել է «ԵՄ էկոպիտակ».
- թ) էներգասպառումը (E_{dly} , $E_{dry/2}$, $E_{g_{dry}}$, $E_{g_{dly,1/2}}$, $E_{g_{iry a}}$, $E_{g_{dry/2}}$)՝ լրիվ եւ մասնակի բեռնվածքով՝ բամբակյա գործվածքի համար նախատեսված ստանդարտ ծրագրի դեպքում.
- ժ) էներգասպառումը՝ անջատված ռեժիմում (P_0) եւ միացված ռեժիմում (P_1) լրիվ եւ մասնակի բեռնվածքով՝ բամբակյա գործվածքի համար նախատեսված ստանդարտ ծրագրի դեպքում.
- ժա) եթե կենցաղային թմբուկային չորացման մեքենան զինված է հոսանքի կառավարման համակարգով, հանգիստ ռեժիմի տեսողությունը.
- ժբ) նշում այն մասին, որ լրիվ եւ մասնակի բեռնվածքի դեպքում օգտագործվող «բամբակյա գործվածքի համար նախատեսված ստանդարտ ծրագիրը» ստանդարտ չորացման ծրագիրն է, որին վերաբերում են պիտակի կամ տեղեկաթերթիկի վրա զետեղված տեղեկությունները, եւ որ այդ ծրագիրը հարմար է սովորական խոնավ բամբակյա լվացքը չորացնելու համար եւ բամբակյա գործվածքի համար ամենաարդյունավետ ծրագիրն է էներգիայի սպառման տեսանկյունից.
- ժգ) «լրիվ եւ մասնակի բեռնվածքով՝ բամբակյա գործվածքի համար նախատեսված ստանդարտ ծրագրի»՝ հաշվարկված ժամանակը (T_t) թույլտրվում է կլորացված մինչեւ թույլտրված ամենամոտ ամբողջ արժեքը, ինչպես նաեւ «լրիվ բեռնվածքով՝ բամբակյա գործվածքի համար նախատեսված ստանդարտ ծրագրի»՝ հաշվարկված ժամանակը (T_{dry}) եւ «մասնակի բեռնվածքով՝ բամբակյա

գործվածքի համար նախատեսված ստանդարտ ծրագրի»՝ հաշվարկված ժամանակը($T_{dry}/2$)՝ թուփներով եւ կլորացված մինչեւ թուփի ամենամոտ ամբողջ արժեքը.

ժդ) կենցաղային թմբուկային չորացնող մեքենան կոնդենսատոր թմբուկային չորացնող մեքենա լինելու դեպքում՝ կոնդենսացման արդյունավետության դասը՝ VI հավելվածի 2-րդ կետի համաձայն, որն արտահայտվում է որպես «կոնդենսացման արդյունավետության «X» դաս՝ G-ից (ամենաքիչ արդյունավետ) A (առավել արդյունավետ) սանդղակով». այն կարող է արտահայտվել այլ եղանակներով, եթե հստակ է, որ սանդղակը ներառում է G-ից (ամենաքիչ արդյունավետ) A -ն (առավել արդյունավետ).

ժե) կենցաղային թմբուկային չորացնող մեքենան կոնդենսատոր թմբուկային չորացնող մեքենա լինելու դեպքում՝ լրիվ եւ մասնակի բեռնվածքով՝ բամբակյա գործվածքի համար նախատեսված ստանդարտ ծրագրի միջին կոնդենսացման արդյունավետությունը (C_{dry}) եւ ($C_{dry}/2$), ինչպես նաեւ լրիվ եւ մասնակի բեռնվածքով՝ բամբակյա գործվածքի համար նախատեսված ստանդարտ ծրագրի՝ կոնդենսացման հաշվարկված արդյունավետությունը (C_i)՝ տոկոսային արտահայտությամբ եւ կլորացված մինչեւ տոկոսի ամենամոտ ամբողջ արժեքը.

ժզ) ձայնի հզորության մակարդակը (հաշվարկված միջին արժեք - L_{wA})՝ արտահայտված դեցիբելներով (դԲ) եւ կլորացված մինչեւ ամենամոտ ամբողջ թիվը՝ լրիվ բեռնվածքով՝ բամբակյա գործվածքի համար նախատեսված ստանդարտ ծրագրի դեպքում.

ժե) եթե կենցաղային թմբուկային չորացնող մեքենան նախատեսված է ներկառուցման համար, ապա նշում դրա վերաբերյալ:

2. Մեկ արտադրանքի տեղեկաթերթիկում կարող են ընդգրկվել նույն մատակարարի կողմից մատակարարված կենցաղային թմբուկային չորացնող մեքենայի մի շարք մոդելների վերաբերյալ տեղեկություններ:
 3. Տեղեկաթերթիկում ներկայացված տեղեկությունները կարող են ներկայացվել պիտակի՝ գունավոր կամ սեւ ու սպիտակ պատճենի տեսքով: Այդ դեպքում 1-ին կետում նշված այն տեղեկությունները, որոնք դեռեւս ներկայացված չեն պիտակի վրա, նույնպես պետք է տրամադրվեն:
-

*ՀԱՎԵԼՎԱԾ III***Տեխնիկական փաստաթղթերը**

1. 3(գ) հոդվածում նշված տեխնիկական փաստաթղթերն ընդգրկում են՝

- ա) մատակարարի անվանումը եւ հասցեն .
 - բ) կենցաղային թմբուկային չորացնող մեքենայի մոդելի ընդհանուր նկարագրությունը, որը բավարար է այն միանշանակ եւ դյուրին կերպով նույնականացնելու համար .
 - գ) անհրաժեշտության դեպքում՝ հղումներ կիրառվող ներդաշնակեցված ստանդարտներին .
 - դ) անհրաժեշտության դեպքում՝ օգտագործված մյուս տեխնիկական ստանդարտները եւ մասնագրերը .
 - ե) մատակարարի համար պարտավորություններ սահմանելու նպատակով լիազորված անձի նույնականացման տվյալները եւ նրա ստորագրությունը .
 - զ) չափումների համար նախատեսված տեխնիկական պարամետրերը՝ հետեւյալ կարգով .
 - i) էլեկտրական ցանցից սնուցվող կենցաղային թմբուկային չորացնող մեքենայի դեպքում՝
լրիվ եւ մասնակի բեռնվածքով՝ բամբակյա գործվածքի համար նախատեսված ստանդարտ ծրագրի էներգասպառումը (Edry, Edry,l/2, Egdry, Egiryl/2, Egdry a, Egdryl/2,a).
- զազով աշխատող կենցաղային թմբուկային չորացնող մեքենայի դեպքում՝

հաշվարկված տարեկան էներգասպառումը (AEC(Cas))՝ կլորացված մինչեւ մեկ տասնորդական նիշը. այն պետք է նկարագրվի հետեւյալ կերպ՝ «էներգասպառումը՝ X կՎտ.ժամ/գազ/տարի՝ լրիվ եւ մասնակի բեռնվածքով 160 չորացնող ցիկլ ունեցող՝ բամբակյա գործվածքի համար նախատեսված ստանդարտ ծրագրի դեպքում: Մեկ ցիկլի ժամանակ փաստացի էներգասպառումը կախված է նրանից, թե ինչպես է սարքն օգտագործվում».

հաշվարկված տարեկան էներգասպառումը (AEC(Cas)el)՝ կլորացված մինչեւ մեկ տասնորդական նիշը. այն պետք է նկարագրվի հետեւյալ կերպ՝ «էներգասպառումը՝ X կՎտ.ժամ/տարի՝ լրիվ եւ մասնակի բեռնվածքով 160 չորացնող ցիկլ ունեցող՝ բամբակյա գործվածքի համար նախատեսված ստանդարտ ծրագրի դեպքում, եւ սպառումը՝ ցածր լարման ռեժիմների ժամանակ: Մեկ ցիկլի ժամանակ փաստացի էներգասպառումը կախված է նրանից, թե ինչպես է սարքն օգտագործվում».

- ii) էներգասպառումն անջատված ռեժիմում եւ էներգասպառումը միացված ռեժիմում.
- iii) լրիվ բեռնվածքով՝ բամբակյա գործվածքի համար նախատեսված ստանդարտ ծրագրի ժամանակը (Tdry) եւ մասնակի բեռնվածքով՝ բամբակյա գործվածքի համար նախատեսված ստանդարտ ծրագրի ժամանակը (Tdry/2)՝ թույլատրելի է կլորացված մինչեւ թույլատրելի ամենամոտ ամբողջ արժեքը.
- iv) միացված ռեժիմի տեւողությունը, եթե կենցաղային թմբուկային չորացնող մեքենան ունի էլեկտրաէներգիայի

կառավարման համակարգ.

v) կենցաղային թմբուկային չորացնող մեքենան կոնդենսատոր թմբուկային չորացնող մեքենա լինելու դեպքում՝ լրիվ բեռնվածքով՝ բամբակյա գործվածքի համար նախատեսված ստանդարտ ծրագրի միջին կոնդենսացման արդյունավետությունը (Cdry) եւ մասնակի բեռնվածքով՝ բամբակյա գործվածքի համար նախատեսված ստանդարտ ծրագրի միջին կոնդենսացման արդյունավետությունը (Cdry/2).

vi) ձայնի հզորության մակարդակը.

է) VII հավելվածին համապատասխան կատարված հաշվարկների արդյունքները:

2. Եթե կենցաղային թմբուկային չորացնող մեքենայի կոնկրետ մոդելի վերաբերյալ տեխնիկական փաստաթղթերում ներկայացված տեղեկությունները ստացվել են նախագծման հիման վրա կատարված հաշվարկի արդյունքում կամ համարժեք այլ սարքերից արտամիջարկման միջոցով կամ այդ երկու միջոցով էլ, ապա տեխնիկական փաստաթղթերը պետք է ընդգրկեն այդ հաշվարկների կամ արտամիջարկումների կամ այդ երկուսի մանրամասները, ինչպես նաեւ կատարված հաշվարկների ճշգրտությունը ստուգելու համար մատակարարների կողմից կատարված ստուգումների մանրամասները: Տեղեկությունները պետք է ընդգրկեն նաեւ կենցաղային թմբուկային չորացնող մեքենաներին համարժեք բոլոր մյուս այն մոդելների ցանկը, որոնց առնչվող տեղեկությունները ձեռք են բերվել նույն եղանակով:

ՀԱՎԵԼՎԱԾ IV

**Տրամադրվելիք տեղեկություններն այն դեպքերում,
երբ չի կարելի ակնկալել, որ վերջնական սպառողները կարող են
տեսնել ցուցադրված արտադրանքը**

1. 4(բ) հոդվածում նշված տեղեկությունները տրամադրվում են հետևյալ կարգով՝

- ա) բամբակյա գործվածքի համար նախատեսված նոմինալ տարողունակությունը՝ կիլոգրամով՝ լրիվ բեռնվածքով բամբակյա գործվածքի համար նախատեսված ստանդարտ ծրագրի դեպքում.
- բ) տեղեկություններ այն մասին՝ արդյոք կենցաղային թմբուկային չորացնող մեքենան հանդիսանում է օդահան, կոնդենսատոր, թե գազով աշխատող կենցաղային թմբուկային չորացնող մեքենա.
- գ) էներգաարդյունավետության դասը, ինչպես սահմանված է VI հավելվածի 1-ին կետում.
- դ) էլեկտրական ցանցից սնուցվող կենցաղային թմբուկային չորացնող մեքենայի դեպքում՝

հաշվարկված տարեկան էներգասպառումը (AEC)՝ կլորացված մինչև ամենամոտ ամբողջ թիվը. այն պետք է նկարագրվի հետևյալ կերպ՝ «էներգասպառումը՝ X կՎտ.ժամ/տարի՝ լրիվ եւ մասնակի բեռնվածքով 160 չորացնող ցիկլ ունեցող՝ բամբակյա գործվածքի համար նախատեսված ստանդարտ ծրագրի դեպքում: Մեկ ցիկլի ժամանակ փաստացի էներգասպառումը կախված է նրանից, թե ինչպես է սարքն օգտագործվում».

գազով աշխատող կենցաղային թմբուկային չորացնող մեքենայի դեպքում՝

հաշվարկված տարեկան էներգասպառումը (AEC(Cas)el)՝ կլորացված մինչեւ մեկ տասնորդական նիշը. այն պետք է նկարագրվի հետեւյալ կերպ՝ «էներգասպառումը՝ X կՎտ.ժամ/գազ/տարի՝ լրիվ եւ մասնակի բեռնվածքով 160 չորացնող ցիկլ ունեցող՝ բամբակյա գործվածքի համար նախատեսված ստանդարտ ծրագրի դեպքում: Մեկ ցիկլի ժամանակ փաստացի էներգասպառումը կախված է նրանից, թե ինչպես է սարքն օգտագործվում».

եւ

հաշվարկված տարեկան էներգասպառումը (AEC(Cas)el)՝ կլորացված մինչեւ մեկ տասնորդական նիշը. այն պետք է նկարագրվի հետեւյալ կերպ՝ «էներգասպառումը՝ X կՎտ.ժամ/տարի՝ լրիվ եւ մասնակի բեռնվածքով 160 չորացնող ցիկլ ունեցող՝ բամբակյա գործվածքի համար նախատեսված ստանդարտ ծրագրի դեպքում, եւ սպառումը՝ ցածր լարման ռեժիմների ժամանակ: Մեկ ցիկլի ժամանակ փաստացի էներգասպառումը կախված է նրանից, թե ինչպես է սարքն օգտագործվում».

- ե) տեղեկություններ այն մասին, թե կենցաղային թմբուկային չորացնող մեքենան ավտոմատ, թե ոչ ավտոմատ թմբուկային չորացնող մեքենա է.
- զ) էներգասպառումը (Edry, EdryA, Egdryl/2, Egdryl/2, Egdrya, Egdryl/2)՝ լրիվ եւ մասնակի բեռնվածքով՝ բամբակյա գործվածքի համար նախատեսված ստանդարտ ծրագրի դեպքում՝ կլորացված մինչեւ երկու տասնորդական նիշ եւ հաշվարկված VII հավելվածի

համաձայն.

- է) էներգասպառումը՝ անջատված ռեժիմում (P_o) եւ միացված ռեժիմում (P_i) լրիվ եւ մասնակի բեռնվածքով՝ բամբակյա գործվածքի համար նախատեսված ստանդարտ ծրագրի դեպքում.
- ը) լրիվ բեռնվածքով՝ բամբակյա գործվածքի համար նախատեսված ստանդարտ ծրագրի ժամանակը (T_{dry}) եւ մասնակի բեռնվածքով՝ բամբակյա գործվածքի համար նախատեսված ստանդարտ ծրագրի ժամանակը ($T_{dry}/2$)՝ թույլտվություններով եւ կլորացված մինչեւ թույլտվություններով ամբողջ արժեքը՝ հաշվարկված VII հավելվածի համաձայն.
- թ) կենցաղային թմբուկային չորացնող մեքենան կոնդենսատոր թմբուկային չորացնող մեքենա լինելու դեպքում՝ կոնդենսացման արդյունավետությունը՝ VI հավելվածի 2-րդ կետի համաձայն.
- ժ) ձայնի հզորության մակարդակը՝ (հաշվարկված միջին արժեք - L_{WA}), արտահայտված դեցիբելներով (դԲ) եւ կլորացված մինչեւ ամենամոտ ամբողջ թիվը՝ լրիվ բեռնվածքով՝ բամբակյա գործվածքի համար նախատեսված ստանդարտ ծրագրի դեպքում.
- ժա) Եթե կենցաղային թմբուկային չորացնող մեքենան նախատեսված է ներկառուցման համար, ապա նշում դրա վերաբերյալ:

2. Եթե տեղեկաթերթիկը պարունակում է նաեւ այլ տեղեկություններ, ապա դրանք պետք է ներկայացված լինեն II հավելվածում նշված ձևով եւ կարգով:
3. Սույն հավելվածում նշված տեղեկությունները տպագրվում կամ ցուցադրվում են ընթերցանելի տառատեսակով եւ տառաչափով:

*ՀԱՎԵԼՎԱԾ V***Շուկայի վերահսկողության նպատակներով
իրականացվող ստուգման ընթացակարգը**

Սույն կանոնակարգի պահանջների հետ համապատասխանությունն ապահովելու եւ ստուգելու նպատակներով չափումները եւ հաշվարկներն իրականացվում են ներդաշնակեցված այն ստանդարտների կիրառմամբ, որոնց համարները հրապարակվել են Եվրոպական միության պաշտոնական տեղեկագրում կամ այլ հուսալի, ճշգրիտ եւ վերարտադրելի մեթոդներով, երբ հաշվի են առնվում գրեթե ստույգ արդյունքներ ապահովող համընդհանուր ճանաչում ունեցող արդիական մեթոդները:

3-րդ եւ 4-րդ հոդվածներով սահմանված պահանջների հետ համապատասխանությունը ստուգելու նպատակներով անդամ պետությունների մարմինները փորձարկում են մեկ կենցաղային թմբուկային չորացնող մեքենա: Եթե չափված պարամետրերը չեն համապատասխանում մատակարարի կողմից նշված արժեքներին՝ 1-ին աղյուսակով սահմանված միջակայքերում, ապա չափումներ են իրականացվում եւս երեք կենցաղային թմբուկային չորացնող մեքենաների համար: Այդ երեք կենցաղային թմբուկային չորացնող մեքենաների չափված արժեքների միջին թվաբանականը պետք է համապատասխանի մատակարարի կողմից նշված արժեքներին՝ 1-ին աղյուսակում բերված միջակայքերում:

Այլապես, մոդելը եւ մյուս բոլոր համարժեք կենցաղային թմբուկային չորացման մեքենաները համարվում են 3-րդ եւ 4-րդ հոդվածներով սահմանված պահանջներին չհամապատասխանող:

Աղյուսակ 1

Չափված պարամետրը	Ստուգման ընթացքում թույլատրելի շեղումները
Հաշվարկված տարեկան էներգասպառումը	Չափված արժեքը չպետք է AEC-ի նոմինալ արժեքից մեծ լինի ավելի քան 6 %-ով:
Հաշվարկված էներգասպառումը	Չափված արժեքը չպետք է Et-ի նոմինալ արժեքից մեծ լինի ավելի քան 6 %-ով:
Կոնդենսացման հաշվարկված արդյունավետությունը	Չափված արժեքը չպետք է Ct-ի նոմինալ արժեքից փոքր լինի ավելի քան 6 %-ով:
Ծրագրի հաշվարկված ժամանակը	Չափված արժեքը չպետք է Tt-ի նոմինալ արժեքից մեծ լինի ավելի քան 6 %-ով:
Էներգասպառումը անջատված եւ միացված ռեժիմում	1,00 Վտ-ից ավելի P ₀ եւ P _i էներգասպառման չափված արժեքը չպետք է նոմինալ արժեքից մեծ լինի ավելի քան 6 %-ով: 1,00 Վտ-ից պակաս կամ հավասար՝ P ₀ եւ P _i էներգասպառման չափված արժեքը չպետք է նոմինալ արժեքից մեծ լինի ավելի քան 0,10 Վտ-ով:
Միացված ռեժիմի տեսողությունը	Չափված արժեքը չպետք է Ti-ի նոմինալ արժեքից մեծ լինի ավելի քան 6 %-ով:
Ձայնի հզորության մակարդակը LWA	Չափված արժեքը չպետք է նոմինալ արժեքից մեծ լինի:

* «Նոմինալ արժեք» նշանակում է մատակարարի կողմից նշված արժեք: Չափումներում 6% շեղումը ներկայացնում է նշված պարամետրերի՝ չափման նոր մեթոդով իրականացվող չափման ժամանակ պիտակավորման/էկոդիզայնի նոր պահանջների համար կիրառվող փորձարարական լաբորատորիայի գործող ընդունելի սխալը, ներառյալ՝ լրիվ եւ մասնակի բեռնվածքի ցիկլերը:

ՀԱՎԵԼՎԱԾ VI

Էներգաարդյունավետության դասերը եւ կոնդենսացման արդյունավետության դասերը

1. Էներգաարդյունավետության դասերը

Կենցաղային թմբուկային չորացնող մեքենայի էներգաարդյունավետության դասը որոշվում է դրա էներգաարդյունավետության ինդեքսի (EEI) հիման վրա, ինչպես սահմանված է 1-ին աղյուսակով:

Կենցաղային թմբուկային չորացնող մեքենայի էներգաարդյունավետության ինդեքսը (EEI) որոշվում է VII հավելվածի 1-ին կետի համաձայն:

Աղյուսակ 1

Էներգաարդյունավետության դասերը

Էներգաարդյունավետության դասը	Էներգաարդյունավետության ինդեքսը
A+++ (ամենաարդյունավետ)	$EEI < 24$
A++	$24 \leq EEI < 32$
A+	$32 \leq EEI < 42$
A	$42 \leq EEI < 65$
B	$65 \leq EEI < 76$
C	$76 \leq EEI < 85$
D (ամենաքիչ արդյունավետ)	$85 \leq EEI$

2. ԿՈՆԴԵՆՍԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՍԵՐԸ

Կենցաղային թմբուկային չորացնող մեքենայի էներգաարդյունավետության դասը որոշվում է կոնդենսացման հաշվարկված արդյունավետության (Ct) հիման վրա, ինչպես սահմանված է 2-րդ աղյուսակում:

Կոնդենսատոր կենցաղային թմբուկային չորացնող մեքենայի կոնդենսացման հաշվարկված արդյունավետությունը (Ct) որոշվում է VII հավելվածի 2-րդ կետին համապատասխան:

Աղյուսակ 2

Կոնդենսացման արդյունավետության դասերը

Կոնդենսացման արդյունավետության դասը	Կոնդենսացման հաշվարկված արդյունավետությունը
A (ամենաարդյունավետ)	$Ct > 90$
B	$80 < C \leq 90$
C	$70 < Ct \leq 80$
D	$60 < Ct \leq 70$
E	$50 < Ct \leq 60$
F	$40 < Ct \leq 50$
G (ամենաքիչ արդյունավետ)	$Ct \leq 40$

ՀԱՎԵԼՎԱԾ VII

Էներգաարդյունավետության ինդեքսի հաշվարկման մեթոդը եւ կոնդենսացման հաշվարկված արդյունավետությունը

1. ԷՆԵՐԳԱԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԻՆԴԵՔՍԻ ՀԱՇՎԱՐԿՈՒՄԸ

Կենցաղային թմբուկային չորացնող մեքենայի մոդելի էներգաարդյունավետության ինդեքսը (EEI) հաշվարկելու համար կենցաղային թմբուկային չորացնող մեքենայի հաշվարկված տարեկան էներգասպառումը լրիվ եւ մասնակի բեռնվածքով՝ բամբակյա գործվածքի համար նախատեսված ստանդարտ ծրագրի համար համեմատվում է դրա ստանդարտ տարեկան էներգասպառման հետ:

- ա) Էներգաարդյունավետության ինդեքսը (EEI) հաշվարկվում է հետևյալ կերպ եւ կլորացվում է մինչեւ մեկ տասնորդական նիշ՝

$$EEI = \frac{AE_c}{SAE_c} \times 100,$$

որտեղ՝

AE_c-ն կենցաղային թմբուկային չորացնող մեքենայի հաշվարկված տարեկան էներգասպառումն է,

SAEC-ն կենցաղային թմբուկային չորացնող մեքենայի ստանդարտ տարեկան էներգասպառումն է:

- բ) Կենցաղային թմբուկային չորացնող մեքենայի ստանդարտ տարեկան էներգասպառումը (SAEC) հաշվարկվում է կՎժ/տարի-ով՝ հետևյալ կերպ եւ կլորացվում է մինչեւ երկու տասնորդական նիշ՝

- բոլոր կենցաղային թմբուկային չորացման մեքենաների դեպքում, որոնք օդահան չեն՝

$$SAEC = 140 \times c^{0,8}$$

- օդահան կենցաղային թմբուկային չորացնող մեքենաների դեպքում՝

$$SAE_c = 140xc^{0.8} - \left(30x\frac{T_t}{60}\right),$$

որտեղ՝

c-ն կենցաղային թմբուկային չորացնող մեքենայի նոմինալ տարողունակությունն է բամբակյա գործվածքի համար նախատեսված ստանդարտ ծրագրի դեպքում,

T_t ծրագրի հաշվարկված ժամանակն է բամբակյա գործվածքի համար նախատեսված ստանդարտ ծրագրի դեպքում:

- գ) Հաշվարկված տարեկան էներգասպառումը (AEC) հաշվարկվում է կՎժ/տարի-ով՝ հետևյալ կերպ եւ կլորացվում է մինչեւ երկու տասնորդական նիշ՝

i)

$$AE_c = E_t \times 160 + \frac{\left[P_o \times \frac{525600 - (T_t \times 160)}{2} + P_l \times \frac{525600 - (T_t \times 160)}{2} \right]}{60 \times 1000}$$

որտեղ՝

E_t -ն հաշվարկված էներգասպառումն է՝ կՎտժ-ով եւ կլորացված մինչեւ երկու տասնորդական նիշ,

P_o -ն անջատված ռեժիմում լրիվ բեռնվածքով՝ բամբակյա գործվածքի համար նախատեսված ստանդարտ ծրագրի դեպքում սպառված էներգիան է՝ արտահայտված վատով եւ կլորացված մինչեւ երկու տասնորդական նիշ,

P_t -ն միացված ռեժիմում լրիվ բեռնվածքով՝ բամբակյա գործվածքի համար նախատեսված ստանդարտ ծրագրի դեպքում սպառված էներգիան է՝ արտահայտված վատով եւ կլորացված մինչեւ երկու տասնորդական նիշ,

T_t -ն ծրագրի հաշվարկված ժամանակն է՝ արտահայտված րոպեներով եւ կլորացված մինչեւ րոպեի ամենամոտ ամբողջ արժեքը,

160-ը մեկ տարվա համար չորացնող ցիկլերի ընդհանուր թիվն է:

ii) Եթե կենցաղային թմբուկային չորացնող մեքենան ունի էլեկտրաէներգիայի կառավարման համակարգ, որով ծրագրի ավարտից հետո կենցաղային թմբուկային չորացնող մեքենան ավտոմատ կերպով անցնում է անջատված ռեժիմի, ապա հաշվարկված տարեկան էներգասպառումը (AEC) հաշվարկվում է՝ հաշվի առնելով միացված ռեժիմի արդյունավետ տեւողությունը՝ ըստ հետեւյալ բանաձեւի՝

$$AEC = E_t \times 160 + \frac{\{(P_t \times T_t \times 160) + P_o \times [525600 - (T_t \times 160) - (T_t \times 160)]\}}{60 \times 1000}$$

որտեղ՝

T_t -ն միացված ռեժիմի տեւողությունն է լրիվ բեռնվածքով՝ բամբակյա գործվածքի համար նախատեսված ստանդարտ ծրագրի դեպքում՝ արտահայտված րոպեներով եւ կլորացված մինչեւ րոպեի ամենամոտ ամբողջ արժեքը:

դ) Ծրագրի հաշվարկված ժամանակը (T_t) բամբակյա գործվածքի համար նախատեսված ստանդարտ ծրագրի համար հաշվարկվում է րոպեներով՝ հետյալ կերպ եւ կլորացվում է մինչեւ րոպեի ամենամոտ ամբողջ արժեքը՝

$$T_t = (3 \times T_{dry} + 4 \times T_{dry} / 2) / 7,$$

որտեղ՝

T_{dry} -ը լրիվ բեռնվածքով՝ բամբակյա գործվածքի համար նախատեսված ստանդարտ ծրագրի ժամանակն է՝ արտահայտված թուղթերով եւ կլորացված մինչեւ թուղթի ամենամոտ ամբողջ արժեքը,

$T_{dry} / 2$ – ը մասնակի բեռնվածքով՝ բամբակյա գործվածքի համար նախատեսված ստանդարտ ծրագրի ժամանակն է՝ արտահայտված թուղթերով եւ կլորացված մինչեւ թուղթի ամենամոտ ամբողջ արժեքը:

- ե) Հաշվարկված էներգասպառումը (E_t) հաշվարկվում է կՎտժ-ով՝ հետեւյալ կերպ եւ կլորացվում է մինչեւ երկու տասնորդական նիշ՝

$$E_t = (3 \times E_{dry} + 4 \times E_{dry/2}) / 7,$$

որտեղ՝

E_{dry} – ը լրիվ բեռնվածքով՝ բամբակյա գործվածքի համար նախատեսված ստանդարտ ծրագրի էներգասպառումն է՝ արտահայտված կՎտժ-ով եւ կլորացված մինչեւ երկու տասնորդական նիշ,

$E_{dry} / 2$ -ը մասնակի բեռնվածքով՝ բամբակյա գործվածքի համար նախատեսված ստանդարտ ծրագրի էներգասպառումն է՝ արտահայտված կՎտժ-ով եւ կլորացված մինչեւ երկու տասնորդական նիշ:

- զ) Գազով աշխատող կենցաղային թմբուկային չորացնող մեքենաների համար լրիվ եւ մասնակի բեռնվածքով՝ բամբակյա գործվածքի համար նախատեսված ստանդարտ ծրագրի էներգասպառումը հաշվարկվում է կՎտժ-ով՝ հետեւյալ կերպ եւ կլորացվում է մինչեւ երկու տասնորդական նիշ՝

$$E_{dry} = \frac{E g_{dry}}{f_g} + E g_{dry,a}$$

$$E_{dry/2} = \frac{E g_{dry/2}}{f_g} + E g_{dry/2,a}$$

որտեղ՝

Egdry-ը լրիվ բեռնվածքով՝ բամբակյա գործվածքի համար նախատեսված ստանդարտ ծրագրի դեպքում գազի սպառումն է՝ արտահայտված կՎտժ-ով եւ կլորացված մինչեւ երկու տասնորդական նիշ,

Egdry 1/2-ը մասնակի բեռնվածքով՝ բամբակյա գործվածքի համար նախատեսված ստանդարտ ծրագրի դեպքում գազի սպառումն է՝ արտահայտված կՎտժ-ով եւ կլորացված մինչեւ երկու տասնորդական նիշ,

Egdry,a-ն լրիվ բեռնվածքով՝ բամբակյա գործվածքի համար նախատեսված ստանդարտ ծրագրի դեպքում լրացուցիչ էներգասպառումն է՝ արտահայտված կՎտժ-ով եւ կլորացված մինչեւ երկու տասնորդական նիշ,

Egdry 1/2,a-ն մասնակի բեռնվածքով՝ բամբակյա գործվածքի համար նախատեսված ստանդարտ ծրագրի դեպքում լրացուցիչ էներգասպառումն է՝ արտահայտված կՎտժ-ով եւ կլորացված մինչեւ երկու տասնորդական նիշ,

fg = 2,5:

2. «ՀԱՎԵԼՎԱԾ II ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՏԵՂԵԿԱԹԵՐԹԻԿ»-ՈՒՄ, «ՀԱՎԵԼՎԱԾ III ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ»-ՈՒՄ եւ «ՀԱՎԵԼՎԱԾ IV ՏՐԱՄԱԴՐՎԵԼԻՔ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՅՆ ԴԵՊՔԵՐՈՒՄ, ԵՐԲ ՉԻ ԿԱՐԵԼԻ ԱԿՆԿԱԼԵԼ, ՈՐ ՎԵՐՋՆԱԿԱՆ ՍՊԱՌՈՂՆԵՐԸ ԿԱՐՈՂ ԵՆ ՏԵՍՆԵԼ ՑՈՒՑԱԴՐՎԱԾ ԱՐՏԱԴՐԱՆՔԸ»-ՈՒՄ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆՊԱՏԱԿՈՎ ԿԱՏԱՐՎՈՂ ՀԱՇՎԱՐԿԸ

II, III, IV հավելվածներում ներկայացվող տեղեկությունների նպատակով գազով աշխատող կենցաղային թմբուկային չորացնող մեքենաների լրիվ եւ մասնակի բեռնվածքով՝ բամբակյա գործվածքի համար նախատեսված ստանդարտ ծրագրի դեպքում գազի համար էներգասպառումը հաշվարկվում է կՎտժ/գազ-ով՝ հետեւյալ կերպ եւ կլորացվում է մինչեւ երկու տասնորդական նիշ՝

$$AEC(Gas) = 160 \times (3 \times Egdry + 4 \times Egdry1/2)/7,$$

II, III, IV հավելվածներում ներկայացվող տեղեկությունների նպատակով գազով աշխատող կենցաղային թմբուկային չորացնող մեքենաների լրիվ եւ մասնակի բեռնվածքով՝ բամբակյա գործվածքի համար նախատեսված ստանդարտ ծրագրի դեպքում էլեկտրաէներգիայի համար էներգասպառումը հաշվարկվում է կՎտժ-ով՝ հետեւյալ կերպ եւ կլորացվում է մինչեւ երկու տասնորդական նիշ՝

$$AEC(cas)el=160 \times (3 \times Egdrya + 4 \times Egdry \ 1/2, /7 + ((PI \times Tt \times 160) + P0 \times [525 \ 600 - (Tt \times 160) - (TI \times 160)]) / 60 \times 1 \ 000$$

3. ԿՈՆԴԵՆՍԱՑՄԱՆ ՀԱՇՎԱՐԿՎԱԾ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԱՐԿՈՒՄԸ

Ծրագրի կոնդենսացման արդյունավետությունը կոնդենսացված խոնավության զանգվածի եւ կոնդենսատոր կենցաղային թմբուկային չորացնող մեքենայի կոնտեյներում հավաքված խոնավության զանգվածի եւ ծրագրով բեռնվածքից հեռացվող խոնավության զանգվածի (որը չորացնելուց առաջ խոնավ փորձնական բեռնվածքի եւ չորացնելուց հետո փորձնական բեռնվածքի միջեւ տարբերությունն է) միջեւ գործակիցն է: Կոնդենսացման հաշվարկված արդյունավետությունը հաշվարկելու համար հաշվի է առնվում եւ՝ լրիվ, եւ՝ մասնակի բեռնվածքով՝ բամբակյա գործվածքի համար նախատեսված ստանդարտ ծրագրի միջին կոնդենսացման արդյունավետությունը:

Ծրագրի կոնդենսացման հաշվարկված արդյունավետության (Ct) հաշվարկը կատարվում է տոկոսային արտահայտությամբ եւ կլորացվում է մինչեւ տոկոսի ամենամոտ ամբողջ արժեքը՝ հետեւյալ կերպ՝

$$Ct = (3 \times Cdry + 4 \times Cdry \ 1/2) / 7,$$

որտեղ՝

C_{dry} -ը լրիվ բեռնվածքով՝ բամբակյա գործվածքի համար նախատեսված ստանդարտ ծրագրի կոնդենսացման միջին արդյունավետությունն է,

$C_{dry1/2}$ -ը մասնակի բեռնվածքով՝ բամբակյա գործվածքի համար նախատեսված ստանդարտ ծրագրի կոնդենսացման միջին արդյունավետությունն է:

Կոնդենսացման միջին արդյունավետությունը՝ C -ն, հաշվարկվում է փորձնական վազքերի կոնդենսացման արդյունավետություններից եւ արտահայտվում է որպես տոկոս՝

$$C = \frac{1}{(n - 1)} \sum_{j=2}^n \left(\frac{W_{wj}}{W_i - W_j} \times 100 \right),$$

որտեղ՝

n -ը փորձնական վազքերի թիվն է, որն ընդգրկում է ընտրված ծրագրի համար առնվազն չորս պատշաճ իրականացված փորձնական վազք,

j -ն փորձնական վազքի թիվն է,

W_{wj} -ն j փորձնական վազքի ժամանակ կոնդենսատորի հավաքարանում հավաքված ջրի զանգվածն է,

W_t -ն չորացնելուց առաջ խոնավ փորձնական բեռնվածքի զանգվածն է,

W_f -ը չորացնելուց հետո խոնավ փորձնական բեռնվածքի զանգվածն է: